ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 08 » Փետրվարի 2017 թվականի N 04

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 02 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի **14**-րդ հոդվածի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել թիվ 02 արտահերթ նիստի օրակարգը:

1. Սիս համայնքի 2016 թ-ի բյուջեի կատարողականի հաշվետվության մասին:
2. Սիս համայնքի տարածքում 2017 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Սիս համայնքի ավագանու 18.11.2016թ. թիվ 28-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին :

Ավագանու անդամներ՝

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ա. Մարգարյան
Ա. Խաչատուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2017 թ. Փետրվարի 08

գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> Փետրվարի 2017 թվականի N 05 - Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի **18-րդ հոդվածի 5-րդ** կետի և **38-րդ հոդվածի1.1)** կետի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Սիս համայնքի 2016 թ-ի բյուջեի կատարողականի հաշվետվությունը:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ.- Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՌ 31.12.2016 թ.

N	Եկամուտների անվանումը	2016 թ. տարեկան բյուջեն	2016 թ. հաշվետու ժամանակաշրջան (I-ին եռամսյակ, I-ին կիսամյակ, 9-ամիս, տարին)			
		պլան	պլան	փաստացի	կատարման %	կատարման % տարեկան պլանի նկատմամբ
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	32672.9		32642.8		99.9
	Հարկային եկամուտներ	8165.9		7837.2		96.0
1	Հողի հարկ	5773.5		5544.4		96.0
1,1	Ֆիզիկական անձանցից	5348,5		5119.4		95.7
1,2	Իրավաբանական անձանցից	425.0		425.0		100.0
2	Գույքահարկ	2392.4		2292.8		95.8
2,1	Ֆիզիկական անձանցից	2225.5		2272.0		102.1
2,2	Իրավաբանական անձանցից	166.9		20.8		12.5
3	Եկամտահարկ					
4	Հարկային օրենսդրության խախտման տուգանքներ					
5	Տեղական տուրքեր ընդամենը	100.0		146.0		146.0
5,1	օբեկտները քանդելու թույլտվության համար					

5,2	շինարարություն սկսելու թույլտվության համար					
5,3	ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքից	40.0		56.0		140.0
5,4	բացօթյա վաճառքից					
5,5	գովազդի վաճառքից					
5,6	կեսգիշերից հետո աշխատանքների թույլտվության համար վճարներ					
5,7	արխիվից օգտվելու թույլտվություն					
5,8	այլ տեղական տուրքեր					
5,9	տեղական վճարներ	60.0		90.0		150.0
6	**Այլ եկամուտներ**	983.3		950.3		96.6
7	համայնքի հողերի օգտագործման վարձավճար	983.3		950.3		96.6
7,1	գյուղատնտեսական հողերի օգտագործման վարձավճար					
8	վարչական իրավախախ - տումների համար					
9	Շենքերի և շինությունների օրինականացում					
10	Տեղական վճարներ					
11	Պատվիրակված լիազորութ. իրականացման համար մուտքեր					
12	**Համահարթեցման սկզբունքով պետբյուջեից դոտացիա**	23423.7		23709.3		101.2
12,1	համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա	23423.7		23424.5		100.0
12,2	այլ դոտացիա					
12,3	փոխատուցում	0.0		284.8		0.0
13	Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին					
13,1	Գրանտներ					
	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	14509.0		15053.2		103.8
1	Համայնքային սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր	0.0		544.2		
2	Հատկացումներ պահուստային ֆոնդից					
3	Տարեսկզբի ազատ մնացորդ	14509.0		14509.0		
	Եկամուտներ ընդամենը	47181.9		47696.0		101.1

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՊԼԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրեր	Հոդվածի NN	2016 թ. տարեկան բյուջեն	2016 թ. հաշվետու ժամանակաշրջան (I-ին եռամսյակ, I-ին կիսամյակ, 9-ամիս.տարին)			
		պլան հազ.դրամ	պլան հազ. դրամ	փաստացի	կատար -ման %	կատար -ման % տարեկան պլանի
Բ	Գ	1	2	3	4	5
Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,	X	32672,9		30090,9		92,1
1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ այդ թվում	X	14210,0		13655,8		96,1
1,1 Աշխատանքի վարձատրություն	X	14210,0		13655,8		96,1
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	14210,0		13655,8		96,1
- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112					
2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	X	5135,0		4622,4		90,0
2.1 Շարունակական ծախսեր	X	1560,0		1275,1		81,7
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	50,0		7,7		15,4
-Էներգետիկ ծառայություններ	4212	1000,0		1000,0		100,0
Կոմունալ ծառայություններ	4213	130,0		30,0		30,0
-Կապի ծառայություններ	4214	300,0		207,5		69,2
-Ապահովագրական ծախսեր	4215	80,0		29,9		37,4
2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	X			...		...
-Ներքին գործուղումներ	4221			...		...
2.3 Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում	X	1425,0		1372,0		96,3
-Համակարգչային ծառայություններ	4232	225,0		102,0		45,3
-Տեղակատվական ծառայություններ	4234	100,0		70,0		70,0
-Կառավարչական ծառայություններ	4235	600,0		0,0		0,0
-Ընդանուր բնույթի այլ ծառայություններ	4239	500,0		450,0		90,0
2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձերք բերում	X	200,0		114,0		57,0
-Մասնագիտական ծառայություններ	4241	200,0		114,0		57,0
2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	X	450,0		441,7		98,2
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	450,0		441,7		98,2
2.6 Նյութեր	X	1500,0		1419,6		94,6
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	150,0		150,0		100,0
-Տրանսպորտային նյութեր	4264	750,0		749,9		100,0
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	200,0		121,9		61,0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	400,0		397,8		99,5
4. Սուբսիդիաներ	X	10377,9		10377,9		100,0
-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական կազմակերպություններին	4511	10377,9		10377,9		100,0
5. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	X					
- Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657					
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	X	1400,0		1390,0		99,3
6.2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)	X	1400,0		1390,0		99,3

-Հուղարկավորության նպաստներ բյուջեից	4726	300,0		290,0		96,7
-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727					
-Այլ նպաստներ բյուջեից	4729	1100,0		1100,0		100,0
7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x	1550,0		44,8		2,9
7.1 ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ-ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	x	350,0		19,8		5,7
-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	350,0		19,8		5,7
7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ	x	200,0		25,0		12,5
-Պարտադիր վճարներ	4823	200,0		25,0		12,5
7.7 ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	1000,0		0,0		0,0
-Պահուստային միջոցներ	4891	1000,0		0,0		0,0
այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ						
Բ, ՈՉ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	x	14509,0		7552,2		52,1
1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	14509,0		7552,2		52,1
-Շենքերի և շինությունների կառուցում	5112	8209,0		2980,6		36,3
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	2400,0		2379,6		99,2
-Տրանսպորտային սարքավորումներ	5121					
- Վարչական սարքավորումներ	5122	1000,0		792,0		79,2
-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	5133	2500,0		1000,0		40,0
-Նախագծահետազոտական ծախսեր	5134	400,0		400,0		100,0

Ավագանու անդամներ՝

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ա. Մարգարյան
Ա. Խաչատուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2017 թ. Փետրվարի08

գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> Փետրվարի 2017 թվականի N 06-Ն

ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 Թ-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.11.2016Թ. ԹԻՎ28-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1.Սահմանել Սիս համայնքում 2017թ-ի համար սահմանված հետևյալ տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ,

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ,

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը,

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ,
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ,
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ,
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 30000 դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 250000 դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 100000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ,

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Սիս համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 միլիոն դրամ:

2. Սահմանել Սիս համայնքում 2017թ-ի համար սահմանված հետևյալ տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փաստաթղթով հիմնավորված ծախսերի փոխհատուցման վճար

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 դրամ փոխհատուցման վճար.

6) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը սահմանել

ա. կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչի համար՝ 50 դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 դրամ

7)համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել-4000 դրամ:

8)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար:

3.Սույն որոշմամբ սահմանված դրույքաչափերը հաշվարկել կիրառելով 0.5 գործակից: 4. Ուժը կորցրած ճանաչել Սիս համայնքի ավագանու 18.11.2016թ թիվ 28-Ն որոշումը:

Ավագանու անդամներ՝

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)

Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ա. Մարգարյան
Ա. Խաչատուրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2017թ. Փետրվարի 08
Գ.Սիս